

[336ա] հանդի. Եսայայ քաջ բարունակներն: Ձեռամբ յողնամեղ եւ բազմավէր. վտիտ ֆանաքի. եղկելի եւ թընուառական անյիշելի Մարգար որ չունէի կար եւ յոյս եւ ո՛չ դիժ մի դրոշմելոյ պապելնեալ ի սուրբ հոգին աստուած սկայ. եւ ողորմութեամբ նորին կատարեցի. ի խնդրոյ եւ արդեամբք հարազատ քեռն իմոյ աստուածասէր զիմաթին ի յիշատակ հոգոյ նորա. եւ ասն իւրոյ եւ հանդուցեալ որդոցն եւ զստերացն որ են հաւաքեալ յերկիրն կենդանեաց ի վայելումն եղբորորդոցն իւրոյ ալէքսան քահանային եւ յիշատակ ծնօղացն մերոց կերակոս քահանային թուրվանդին. եղբարցն մերոց վեհադոցն Ղազար քահանայի եւ արխատակէս վարդապետի [336բ] եւ եղբորորդոցն մերոց. կողմաս. քաջուտումն վարդապետի եւ ալէքսիանոս քահանայի յովհանիսի. ստեփանոսի եւ կիրակոսի եւ ամենայն արեան մերձաւորացն. կենդանեացն եւ հանդուցելոցն. եւ պաշար երկայնաձիգ ճանապարհին՝ որ տանի առ հանդերձեալ եւ անազին դատաստանն. եւ սովաւ լսէ զհայրական ձայնն. եթէ եկայք օրհնեալք չօր իմոյ. ժամանակէք զարքայութիւնն Ամէն:

9.
Մ Ա Շ Տ Ո Ց

ԺԴ. — ԺԵ. դա՞ր:

ԹՈՒՂԹՐ՝ 135. Էջ չէ նշանակուած: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 18 X 13 X 4 սմ.: — ԿԱԶՄ՝ կաւի գոյն կաշիով պատած տախտակէ. մագաղաքեայ պատկանակ կայ միայն մէկ քերթ սկիզբէն, երկաթագիր գրութեամբ, որ կը պարունակէ Աւետարանէն ընթերցուածներ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միակուս. տող՝ 20: — ՆԻՒԹ՝ հաստ բուրդ: — ԹԱՆԱԹ՝ սեւ. վերնագրերն, սկզբնաւտերը կարմիր, բայց առանց գարդի: — Պատկերներ չկան. մէկ երկու հատ գլխազարդ եւ լուսանցազարդ, կանաչ գոյնով, շատ անարժէք: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՀԱՆԳԱՄԱՆ՝ հին, բայց նորագուծ. վերջէն մէկ քերթ պակաս է: — ԴԱՏԱՐԿԹՈՒՂԹ՝ չկայ: — ԳՐԻԶ, ՏԵՂ ԵՒ ԹՈՒՆԱՄԱՆ՝ անձամբ. ԺԴ. կամ ԺԵ դարու գործ կ'ընենայ: — Ձեռագիրս այժմ կը պատկանի Գեղամ Սարգսեանի:

Մատենան է Փոքր Մաշտոց. բուն գրչէն չունի ոչ մի յիշատակարան. գլխաւոր յիշատակարանը անշուշտ վերջին ինկած թերթին մէջ էր. գրքին սկիզբը (էջ 2ա) կայ հետեւեալ բարբառը յիշատակարանը.

Ես իսայապար (բուն անունը եղծուած եւ վրան այսպէս գրուած է շեղագրով) սասացա զսուրբ զերթս ի հալալ ընչեց իմոց եւ արգար վաստակոց իմոց. յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց հաւրն իմոյ աստուածաբունն եւ մարն իմոյ դուժիքն (ստորագծեալ մասը քերտուած է, բայց դեռ անորոշ կերպով կ'ընենայ. միայն Գ տառը կասկածելի է). եւ որդոցն իմոց յովանիսին եւ զստերացն իմոց նիկարին եւ իրմզին: Եւ ետու զսուրբ զերթս իմ քերթորոցն յովանէս քահանային. Եւ ով ոք ոչ ունի իշխանութիւն հանելոյ ի ձեռաց սոր զսուրբ զերթս ոչ յիմոց եւ ոչ աւտարաց եթէ ոք յանդէնի գմանն եւ զանէճքն զկայնին եւ զյուրայի առցէ: Ով քահանայք յերես անկեալ արաչեճ զձեզ յիշատակի յիշ-

ման արժանի անէճք. նայ որ ինքն է ի տալն ձեզ եւ մեզ ողորմեացի եւ տացէ զիւր արքայութիւնն ամէն: Քանի որ (այսպէս կ'իտատ մնացած):

Ասոր տակ նօտրագիր. «ԹՎ. ՌՃԻՍ. (= 1672): ունն. աղամ ամսոյն Ժ ում. բղմ. մու» (= բարագամ մեռու):

Վերջին կողին վրայ նորոգողը փակցուցեր է 1893 թուին Նոր-Ձուղայ տպուած զրքի մը մէկ թերթը, որուն վրայ ալ ոմն Տէր Կարապետ 12 տող անմիտ ստանաւոր մը գրած է:

ՎԵՐՋ



Ժ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Բ
Ս Տ Շ Մ Պ Օ Լ Ո Յ Պ Ը Տ Մ Ո Ւ Թ Ե Ն
ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻԻ ՔԷՕՍԻՐՔԵԱՆ

Ս. Կարապետէն կարելի չէ բաժնուել, առանց այցելելու անոր քոյր թաղի Եկեղեցին «Ս. Խաչը», որուն երկու հարիւր յիսնամեան տարեդարձը մեծահանդէս տօնուեցաւ 1927ին, եւ այդ առթիւ Եկեղեցւոյն Աւագերէցը Տէր Հմայեակ Էքսէրճեան՝ բանասէր Քահանայն պատրաստեց կարելու արշխատութիւն մը «Յիշատակարան Հնգեակ Յոքեղեանի Ս. Խաչ Եկեղեցւոյ Իւսկիւտարու 1676—1926» անունը՝ որ լոյս տեսաւ Սէթեան Տպարանին:

Երեմիա Չէլէպի իր «Ստամբուլոյ Պատմութիւն» երկին մէջ ընաւ չլիշէր այս Եկեղեցին, որովհետեւ իր գործը գրած ու աւարտած տարիներուն, այսինքն՝ 1661—1684, դեռ հաստատուած չէր այն, եթէ ոչ՝ Երեմիա Չէլէպիի պէս Եկեղեցասէր ու ազգասէր ներհուն պատմագիր մը իր տեղագրական մանրաքննիչ պոռոյտներու միջոցին, երբ Վոսիորի հայաբնակ յետին վայրերուն Եկեղեցիներն ու մատուռները մէկիկ մէկիկ կը նշանակէ, երբ Իւսկիւտար քաղաքը մանրամասն կերպով կը նկարագրէ եւ Ենիմահալլէի Ս. Կարապետը կը յիշատակէ, եւ մինչեւ անգամ չի մոռնար զրելու թէ Չամլըճա կոչուած բլուրին մօտերը եղած այգիները մեծ մասամբ սեպհական են Հայերու (ինչպէս պիտի կարգանք քիչ հետո):

65 Այդ հրատարակութեան մասին հարկ տեսայ կարգ մը լրացուցիչ տեղեկութիւններ գրել, Կ. Պորոյ «Նոր-Լուր» թերթին մէջ 1927 Սեպտ. 9ին եւ Տէր Հմայեակ գրածի վերջու պատասխան տուաւ «Ճամանակ» օրագրին 1927 Սեպտեմբեր 29ի թուով, իրեւ ինքնարդարացում իւր արխատութեանը մէջ զիտողութիւններու տեղի տուող կարգ մը կէտերուն, որոնց կ'անդրադառնում Ծանօթագրութիւններու ընթացքին:

ուն), անկարելի եւ անբնական է որ անտես ընէր Ս. Կարապետի ա՛յնչպի մօտիկը եղած Ս. Խաչ Եկեղեցին, մանաւանդ որ՝ 1662 թուականին ալ հոն բնակած է՝ ինչպէս գրած էմ Ս. Կարապետի մասին մէջ:

Ազգային ժամանակակից պատմութեան մէջ կարելու տեղ գրաւած Եկեղեցի մ'է Ս. Խաչը. կանգուն է Իւսկիւտարի բարձունքին Սելամիէ՞ 66 կոչուած տեղը, ուր հաւանական է՝ որ կանուխէն կար հայ բնակչութիւն, հարկաւ սակաւաթիւ, որ առանձին եկեղեցի ունենայէ առաջ, իւր հոգեւոր միւլիթարութեանը եւ կրօնական պէտքերուն համար կը դիմէր անկասկած Ս. Կարապետ:

* * *

Ս. Խաչի մասին Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեանի գրածը, զոր անցողակի կերթով մէջ բերի Ս. Կարապետ Եկեղեցւոյն, եւ զարեւրիւ պատրիարքին առթիւ, ստիպուած էմ կրկնել այս տեղ ալ առանց Ս. Կարապետի վերաբերեալ մասին, որպէս զի կարենանք ճշդիւ իմանալ թէ ի՞նչ պայմաններու մէջ կարելի եղած է հաստատել այդ Եկեղեցին:

Սարգիս Դպիր կը գրէր. «Եւ աստ յիւսեֆիւտար քաղաքի հետի ի ծովագրէն ի լեռնալոյսն կոյս, գոն երկու քաղք բնակութեան Հայոց մօտ իրերաց՝ հանդերձ երկու եկեղեցիոք: Որոց առաջինն կոչի Սելամբը, յոքուս է եկեղեցի մի Հայոց յանուն սուրբ Խաչի: Որոյ առաջին կերտողն ի ԶԳՈՅԷ՝ է Տէր Արքաիւս քահանայն պալաքցի, եւ գերեզման նորին է ի բակի Եկեղեցւոյն որ վախճանեալ քաղեցաւ անդ ի քուականին Հայոց ՌՃԶԶ (1727)»:

Հ. Ղ. Ինճիճեան ալ «Ամարանոց Բիւզանդեան»-ին մէջ (էջ 185) ինչպէս Ս. Կարապետի նոյնպէս ալ Ս. Խաչին համար շարագրած է, ոտանաւոր յիշատակութիւն մը 4 տող՝ որ է, «Երազիւտար» վերագրին տակ:

66 Սելամիէ անունը տրուած է այդ թաղին Անի-պատեմ (դառն Նուշ) կոչուած վայրը գտնուած թէք-բէի մը (իմա՛ թրքական աղօթաւայր) համարաւոր Շէյխը (աղօթապետ) եղող Սելամի Ալի Էֆէնտիի յիշատակ: Կը պատմուէր թէ այդ Շէյխը հաստատած է այդ թաղը:

Ունի նա մասնաւոր գերեզման թաղին այն ճանապարհին վրայ, ուրիչ դէպի Ս. Խաչ եւ Աճիպատէճ կ'երթցուի. սուրբ նկատուած է այն իր կրօնակիցներէն եւ այդ պատճառաւ անոր հողակոյտը միշտ թարմ կը յարգարէին ու վրան ալ գիշերները լապտեր մը կը վառէին հանդիպակաց թուրք զինուորատուներն: Այդ թէք-բէն ա՛յլ եւս չունի գոյութիւն. բայց հիմնագրին դեղմանը կը մնայ ճամբուն վրայ:

«Կրկն եւ ի սին թաղը Հայոց Ազգին Սէլամբը ձայնեալ թաղ իւր առաջին, Ուր վայելչակերտ՝ չին Եկեղեցին Շինեալ նորոգեալ յանուն Սուրբ Խաչին»:

* * *

Տեսակ մը խորհրդաւորութեամբ ծածկուած է Ս. Խաչ Եկեղեցւոյ նախնական շինութեան, կամ լաւ եւս՝ ստեղծման պատմութիւնը, որ թէեւ ժողովրդական գրոյցներու եւ աւելի աւանդակցութեամբ վրայ յեցած է, այնու ամենայնիւ՝ զուրկ չէ հաւանականութենէ. եւ միթէ գրոյցները կամ աւանդութիւնները չեն՝ որ շատ անգամ կը կազմեն լուրջ պատմութեան մը կորիզը, հետզհետէ լուսաբանուելու կամ ջրուելու պայմանաւ, յայտնաբերուած Յիշատակարաններու եւ փաստերու շնորհիւ:

Սելամիէի մէջ ծնած, սնած ու մեծցած, ես իմ պատանեկութեանս հազար անգամ լսած էմ թէ՛ այդ՝ Տէր Արքաիւս անուն Քահանայ մը առաջին հիմնադիրը եղած է Ս. Խաչ Եկեղեցւոյն, առ այս մեծամեծ զոհողութիւններ ընելով եւ զժուարին պարագաներու հանդէպ լուսաբանուելու կամ ջրուելու պայմանաւ, չըջահայեաց հնարամտութեամբ:

Թաղեցի ծերունիներ, որոնց հետ իմ մօրենական Մեծ Հայրս, վերաբոյժ Ղուկաս աղա Ղուկասեան (եօթանասամեայ մեռած 1869ին), եւ Ս. Խաչի տարէց քահանայներ՝ Աւագերէց Տէր Մարտիրոս, Խուշ Տէր Խորէն, լուսաբարարապետ Տէր Գրեգոր եւ Տէր Գարեշին, նաեւ Տէր Աթանաս, որոնք հետզհետէ վախճանած ու թառուածեայ եւ աւելի տարիքի մէջ, կը պատմէին միշտ, իրենք ալ աւանմէջ, կը պատմէին միշտ, թէ Տէր Արքաիւս, զուր Սարգիս Դպիր Պալաքցի կ'անուանէ ինչպէս տեսանք վերեւ, Իւսկիւտարի վերոյիշեալ թաղը՝ 67 հաստատուելով կը սկսի քահանայապետութիւն Ս. Կարապետ Եկեղեցին, եւ միանգամայն գաղտ ժամերգութիւն եւ պատարագ ընելու մայն կազմ տունին մէջ:

Իր բնական տունին մէջ թուականներուն էր Յայանի չէ թէ ո՞ր թուականներուն էր այս, եւ թէ ե՞րբ Տ. Արքաիւս փոխադրուեցաւ Իւսկիւտար—Սելամիէ. բայց կ'երեւի թէ ցաւ Իւսկիւտար—Սելամիէ յիշուածինէն շատ առաջ եղած ըլլալու է այն՝ 68:

67 Որ Սելամիէ կոչուած է Շէյխ Սելամի Ալիի անունէն յետոյ:

68 Այս տեղ կը ստիպուիմ դիտել, թէ ընդունելի չէ Տ. Հմայեակ Քահանայի այն վարկածը (էջ 7), թէ՛